

ՏՈՄԱՐԱՐԻՆԵՐ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՏՈՄԱՐՆԵՐ

ԱՆՈՐՅ ԻՐԱՐՄԷ ՈՒՆԵՅԱԾ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ

ԵՒ ԾՌԱՋԱՍԻԿ

1. — Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը, իր չընկալած թեմերովը միասին, տոմարական հին դրութեամբ կ'ընթանայ, հասկնալի պատճառներով: Թունաց Երուսաղէմի Պատրիարքութիւնն ալ կը կիրարկէ հին տոմարը Երուսաղէմի մէջ, Ս. Տեղեաց իրաւակցական պատճառներով: Մինչև որ Թունաց և Հայոց Պատրիարքութիւնները համաձայնութեան եզր մը գտնեն իրարու հետ նոր կամ Գրիգորեան Տոմարը միասնաբար ընդգրկելու և զործադրութեան գնելու: Ամենայն Հայոց Հայրապետներէն երջնակայիշատակ Տ. Տ. Գէորգ Ե. Կաթողիկոսը Թ. 349 և 6 Նոյեմբեր 1923 թուակիր հայրապետական կոնդակով մը հրամայած էր ամենուրեք, որպէս զի Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին ալ, Փրկչին 1924 թուականէն սկսեալ, Նոր Տոմարով ընթանար: Այդ կոնդակին մէջ կ'ըսուի. — «Զի ըստ աստղաբաշխական փոփոխմանց եղանակաց տարեշրջանի առաւել ուղիղ է նոր տոմարն քան զհինն, վասն որոյ և ամենայն պետութիւնք և եկեղեցիք քրիստոնէից զսօսն քրիստոնէական կատարեն ըստ այսմ»:

Ի Ս. Էջմիածին, Նոր Տոմարով պատրաստուեցաւ և տպագրուեցաւ 1924 տարուան ընդարձակ օրացոյցը և արտատահմանի բոլոր թեմերուն և առաջնորդութեանց: Ղրկուեցաւ ի գործադրութիւն:

Վերել յիշուած հայրապետական կոնդակին Դուրեան պատրիարք պատասխանեց հանգամանօրէն, բացատրելով Ս. Տեղեաց իրաւակցական պատճառներով ստեղծուելիք անպատեհութիւնները, որ սպուեցաւ Երուսաղէմի մէջ 1924ին և որ փոքր տետր մըն է 8 էջերէ բաղկացած:

2. — Ինչպէս վերել կը տեսնուի արգէն, մինչև որ Երուսաղէմի Թունաց Պատ-

րիարքութիւնը Նոր Տոմարը չընդունի և չկիրարկէ, մենք եւս չենք կրնար ընդունիլ, Ս. Տեղեաց մէջ երկուստեք մեր ունեցած իրաւակցական պատճառներով և խնդիրներով:

Կ'արժէ ուրեմն հոս նկատի ունենալ Հին Տոմարին (Թուլեան) և Նոր Տոմարին (Գրիգորեան) իրարմէ ունեցած տարբերութիւնները կամ քանք չեղումները: Լին Տոմարական հաշուով, տարին կը բաղկանայ 365 օրերէ և 0.2422166 կոտորակէ մը: Այս 0.2422166 կոտորակը տարին երուսաղէմի թեմացքին նկատի առնուելով, չորս տարուան ընթացքին մէկ օր կ'ըլլար: Աշխարհահռչակ Յուլիոս Կեսարի ժամանակ, Աղեքսանդրացի Սոսզինէս անունով հռչակաւոր աստղագէտը, մասնագիտական տըլեակներով հաշուեր և գտեր է որ տարի կոչուած ժամանակը 365 օր 6 ժամ կամ 365 1/4 օր ունի: Սոսզինէս կարգադրեց և կանոն դրաւ որ, իբրեւ յաջորդական երեք տարիները, սովորական և հասարակ տարիներ ըլլան, որոնք 365 օր միայն ունենան, իսկ չորրորդը ըլլայ նահանջ տարի (Année Bissextile) 366 օրեր ունենալով: Այդ կոտորակը (6 ժամ) կ'աւելնար յաջորդական կոտորակին վրայ և չորրորդին հետ կ'ըլլար մէկ օր: Այս պատճառաւ, չորս տարին անգամ մը, տարին նահանջ կ'ըլլար և այդ տարուան փետրուար ամիսը փոխանակ 28 օրուան 29 օր կ'ունենար: Տոմարական այս կարգադրութիւնը Հռոմի 708 թուականին (Ն. Ք. 43-44) տեղի ունեցաւ և Յուլեան Տոմար կոչուեցաւ ի պատիւ Յուլիոս Կեսարին (101-44 Ն. Ք.):

3. — Սակայն հետագային, աստղագիտական և մանրազնին հաշիւներով զիտուեցաւ որ, Թուլեան Տոմարն ալ իր թէքերէ թերութիւններն ունէր: Աստղագէտները գիտեցին որ, Սոսզինէսի նշանակած տարին 365.25 օրերէն քիչ մը կը պակսի այսինքն՝

365.25

365.2422166

000.0077834

հետեւաբար այս 0.0077834 կոտորակը, տարին երուսաղէմի թեմացքին իբրեւ վրայ բարդուելով, 128 տարուան ընթացքին մէկ օր կ'ըլլար, իսկ 400 տարուան մէջ 3 օրէն քիչ մ'աւելի կ'ըլլար: Այս պատճառաւ,

հարկ տեսնուեցաւ գիտնականօրէն չտկել Յուլեան Տոմարին սխալները և աստղագիտական հաշիւները՝ Նիկիոյ Տիեզերական Ա. Ժողովին (325) կանոնադրութեան համաձայն, հետեւողութեամբ Յուլեան Տոմարին, ընդունուեցաւ և կանոն դրուեցաւ որ, Մարտ 21ը, ըլլալ իրեն Գարնանային զիշերահաւասարին օրը, Ս. Զատիկ տօնին շարժական կիրակին գտնելու և ճշգիւտ համար, Ուրեմն, ըստ վերի կանոնադրութեան, Ս. Զատիկ տօնը կը կատարուի, Գարնան զիշերահաւասարէն ետքը, լուսնի Աւագ լրուածէն ետքը անոր անմիջապէս յաջորդող կիրակին։ Բայց տեսնուեցաւ որ 1582 թուականին, Գարնան զիշերահաւասարը կ'իշար Մարտ 11ին և ո՛չ թէ Մարտ 21ին։ Եւ իրօք ալ 325-1582 թուականը, 1257 տարինբու ընթացքին, Ս. 0078:4 կոտորակը բազմապատկելով կ'ունենանք 9 օրէն քիչ մ'աւելի կամ այսինքն՝ գրեթէ 10 օր։ Հռովմի՝ Գրիգոր ԺԳ. մեծագործ պապը (1572-1585) իր ատենուան Նշանաւոր աստղագէտներուն խորհրդակցութեամբ որոնց մէջ էր Նաեւ Լիլիօ (Լուիճի) անուամբ աստղագէտը, կարգադրեց որ 1582 Նոյս. 4, հինգշաբթի օրուան յաջորդող օրը, փոխանակ հոկտեմբեր 5 ուրբաթ ըսելու, տասը օրուան մը ոստումով յառաջանալու ըսուեցաւ և եղաւ 15 հոկտեմբեր ուրբաթ։

Այս առթիւ երկու մշտնջենական կանոններ դրուեցան։

Ա. — Այն տարիները, որոնց վերջին զոյգ թուանշանները 4-ով կը բաժնուին, ըլլան նահանջ տարիներ։

Բ. — Այն գարատարիները, որոնց վերջին զոյգ թուանշանները գէրօ են, և որոնց առաջին երկու թուանշանները 4-ով կը բաժնուին, ըլլան դարանահանջ։

4. — Տեսանք թէ, Հին և Նոր Տոմարները (Յուլեան և Գրիգորեան) տարիներուն, իրարմէ ունեցած տարբերութիւնը 1582-ին 10 օր էր միայն, բայց այժմ՝ (1947) 13 օր է անոնց իրարմէ ունեցած տարբերութիւնը, իսկ հետագային ալ, այսինքն՝ 2100 թուականին 14 օրէն քիչ մ'աւելի պիտի ըլլայ։ Եւ եթէայով պիտի աւելնայ անոնց իրարմէ ունեցած տարբերութիւնները՝ նկատի առնելով լուսնային և արեգակնային տարիներու տարբերութիւնները և աստղագիտա-

կան հաշիւներու ինչ ինչ սխալները և թեք-նիք մանրագին հաշիւները։

5. — Եկեղեցական տօնակարգին մէջ, տօններուն կեդրոնն է Զատիկը։ Շարժական բոլոր տօնները իրմէ կախում ունին։ Զատիկը 35 օրուան ետքմալնուի Ժուշի, այսինքն՝ Նիկիոյ տիեզերական Ս. Ժողովին (325) համաձայն, ան՝ Մարտ 22-էն առաջ չի կրնար տօնուիլ և ո՛չ ալ Ապրիլ 25-էն վերջը։ Մարտ 22-էն Ապրիլ 25 օրերուն թիւն է 35։ Հետեւաբար, Զատիկը, անպայման այդ 35 օրերուն մէջ պարփակուած կիրակիներէն մէկուն մէջ պիտի պատահի։ Այս 35 օրերը մեր Այլուրեքին 35 զիշերովը նշանակուած են։ Այս 35 գիրքը Տարեգիր կամ Գիր Տարույ (La Lettre Domiale) կը կոչուին և իրենց շարքին թուահամարովը կը ցուցնեն թէ՛ գարնան զիշերահաւասարէն(*) որչափ հեռի է Զատիկը։

Նահանջ տարիներուն համար զոյգ տարեգիրներ կը գործածուին, որոնցմէ մին երկու ամսուան համար իսկ միւսը մնացեալ տասը ամսուան համար կը գործածուին։

Զատիկը գտնելու համար, գիրքին միւլոցն է, գտնել ուզուած տարուան Տարեգիրը և անոր թուանամարը աւելցնել Մարտ 21-ին վրայ և եթէ գումարը 31-էն աւելի է հանել 31-էն։ Մնացածը ցոյց կուտայ թէ ե՞րբ է Զատիկը։ Զոր օրինակ, կուզենք գիտնալ թէ՛ գալ տարի (1948) Հին Տոմարով Զատիկը ո՞ր ամսուան մէջ է և ե՞րբ կը պատահի։ Գիտենք թէ՛ գալ տարիներ Տարեգիրն է ՎՍ, որ նահանջ տարի մըն է, տարեգիրն ալ զոյգ. այսինքն՝ ՎՍ գրեթէ կը կազմուի։

Արդ՝ Ս=29-ի, այս 29-ը պէտք է աւելցնել 21-ին վրայ և կ'ունենանք 50 (29+21=50), 31-ը պէտք է հանենք 50-էն (50-31=19), կ'ունենանք 19, ուրեմն գալ տարի Ապրիլ 19 Զատիկ է Հին Տոմարով։

(*) Տարուան մէջ երկու անգամ զիշերահաւասար կը պատահի, մին՝ Մարտ 21-ին, իսկ միւսը Սեպտ. 21-ին, առաջինը Գարնան Գիշերահաւասար՝ իսկ երկրորդը՝ Աւան Գիշերահաւասար կը կոչուին։ Գիշերահաւասարներուն, երկրի երկու թեւերէն արեւն հաւասար հեռաւորութեամբ գտնուելուն պատճառաւ չլինի տիւ և զիշեր հաւասար։

Նոր Տոմարով գրեցիք, գալ տարուան (1948) Տարեգիրն է ԸՆ, արդ է=7-ի այս 7-ը պէտք է աւելցնել 21-ին վրայ և կ'ուսնենանք 28 (7+21=28), և ուր որ պատահի անպատճառ Ջատիկ է այդ օրը, ուրեմն Մարտ 28-ին Ջատիկ է Նոր Տոմարով, Ուստի նախանջ տարիներուն՝ զոյգ տարեգիրներէն մէկը պէտք է գործածել Յունուարի առաջին օրէն մինչև Փետրուարի վերջին օրը: Իսկ միւսը պէտք է գործածել Մարտէն մինչև Դեկտեմբեր: Ինչպէս որ կ'երևի, Ձոյգ Տարեգիրները այբուբենական կարգով չեն շարուած, այսինքն՝ այբուբենքին մէջ Նախորդը զոյգ տարեգիրներուն մէջ յաջորդ կ'ըլլայ, զոր օրինակ, փոխանակ ՍՎ շարուելու, կը շարուի ՎՍ, այս ետևաառջութեան պատճառը այն է որ, նախանջ տարիներուն Փետրուարը մէկ օր կ'աւելնայ և այդ աւելցուած մէկ օրը պատճառաբար գիտութեան մէջ նշանակելու համար մէկ թիւ աւելի ունեցող տարեգիր մը պէտք է, այսինքն՝ եթէ Փետրուարը 28 օր ըլլայ, այդ ամսուան բոլոր օրերուն տօները կամ պահքերը հասարակ տարեգիրով կը նշանակուէր, աւելցած մէկ օրին տօնը կամ պահքը նշանակելու համար աւելի թիւ մ'ունեցող Տարեգիր պէտք է, 28 օր ունեցող Փետրուարի տարեգիրներուն Տարեգիրը պակաս մէկ օր մը կուգայ, և որովհետեւ զոյգ տարեգիրներ կազմելու համար ըստ սովորական հաշուին, միշտ սեւ իրարու յաջորդ այբուբենական երկու գիրեր կ'առնուին, պէտք է որ նախանջի Փետրուարին մէջ գործածուելու Տարեգիրը այդ երկու գիրերէն թիւ մ'աւելի ունեցողը առաջ գրուի անպատճառ:

Ներկայ Տիեզերական Ա. Ժողովէն (325) առաջ, Ջատիկ տօնը հրէից սովորական հաշուով էր, միայն թէ՛ հրէից հետ միասին շտապելու համար է որ, լուսնին աւագ լրման յաջորդող Կիրակիին կը յետաձգուէր: Կիրակին կամ Միաշաբթին Տէրունական (Տէրունի) օր մըն է, Քրիստոսի լուսափայլ և կենսապարգև Ս. Յարութեան ի յիշատակ (տե՛ս Յովհ. Ի. 1 և 26, Ա. Կորնթ. ԺԱ. 2, Գ. Առաք. Ի. 7, Յայտ. Ա. 10 և այլն):

Վասնզի՝ կանոն է որ Ս. Ջատիկ տօնը, անպատճառ Կիրակի օր մը պէտք է որ տօնուի, և մէջ թէ շաբթուան ունէ մէկ օրը,

երբ լուսինը (*) իր լրման կը հասնի, ինչպէս հրեայք մինչև ցարդ կ'ընեն: Տոմարագիտութեան մէջ, իննետասներեակները ամսուան այսինչ օրուան մէջ լուսնին քանիբերորդ օր ըլլալը կը ցուցնեն և կը ճշտեն: Իսկ վերագիրները (Les Epactes) պէտք է աւելցնել լուսնային տարուան օրերուն վրայ, որպէսզի արեւային տարուայ հետ համասարին: Արեգակնային շրջանը 28 տարի կը տեւէ, այսինքն՝ 19 տարին լրանալէն վերջ, տարին կը սկսի այն օրը երբ արդէն 19 տարի առաջ սկսած էր: Աւելի պարզելու, 19 տարուան լրանալէն վերջ, լուսնին ծնունդը մինեոյն օրուան մէջ կը պատահի:

Եւ որովհետեւ արեւային և լուսնային շրջանային տարիներուն մէջ տարբերութիւններ կան, ժամի, վայրկեանի, երկվայրկեանի, շատ նուրբ հաշիւներ, վերագիրները (Les Epactes) կազմուեցան, լուսնի ծնունդները ճշգրիտ համար: Արդ, այն պիտի թիւ մը պէտք էր ունենալ որ թէ՛ 19-ով և թէ՛ 28-ով հաւասարապէս բաժանելի ըլլար, առանց կոտորակի, որով կարելի ըլլար, արեւային և լուսնային շրջանները միասին սկսիլ և միասին վերջանալ, թէ՛ 19 և թէ՛ 28-ով հաշուեցան: Ուստի՝ 19×28 կ'ունենանք 532 տարի, որով էսպես եւն հիմնադրուեցաւ և կամ Մոսկեցեաւոր մեծ օջաւը կազմուեցաւ: Այսինքն՝ 532 տարի վերջը, երբ շրջանը կ'աւարտի, շրջանին առաջին տարուան սկիզբը որ կէտին վրայ որ հանդիպեցան, մեծ շրջանին լրանալէն վերջ, առջի տարուան սկիզբը արեւ և լուսին նոյն կէտին վրայ կը հանդիպին:

Ծ. — Տեսանք թէ Ջատիկը՝ Ս. Յարութեան տօնը, Ներկայ Տիեզերական Ս. Ժողովին կանոնադրութեամբ, իրեն տօնախմբութեան համար ճշտուած Կիրակի օր մ'ունի: Թէև Բիւզանդիոնն ալ ընդունեց

(*) Լուսինը երկրին արեւնեակներէն մին է և անոր շուրջը իր թուալումը կը կատարէ 29 1/2 օրուան ընթացքին որ լուսնային ամիսին տեղւորութեան շրջանը կը կազմէ: Լուսնից երկրէն 50 անգամ աւելի փոքր է և երկրէն 85,000 փարսանգ հեռաւորութիւն մ'ունի, մէկ փարսանգը հաւասար է երեք մղոնի, ի՞նչ կարծուի թէ լուսնոյ մէջ կան լուսնի, ձորեր, հրաբուխներ, օսկայն ան սառած վիճակի մէջ զտառելու, կեն-

Էսսեան շրջանին կազմութիւնը և դրութիւնը, սակայն և այնպէս 532 տարուան մեծ շրջանին մէջ, չորս տեղ մանր տարբերութիւններ գտաւ և դրաւ, որով լուսնին լրումը փոխանակ կիրակի օրը ինչալու Շաբաթ օրը կ'իյնար: Որով՝ ըստ իրենց, լուսնին լրումը Շաբաթ օրուան մէջ պատահելուն, յաջորդ օրը կարելի կ'ըլլար Զատիկը տօնել և ոչ թէ շաբաթ մը վերջ յետագիւ ինչպէս հայերը կ'ընէին, հետեւ. ու՛ր լուսնեան տոմարական դրութեան, Շրջանին այդ չորս տարիներն են որ Մազա-հիկ (Մուռ Զատիկ) առաջ կը բերէին, կանադրուած օրէն չեղելով, լուսնին լրումը փոխանակ կիրակիի, Շաբաթ օր լրանալուն պատճառաւ: Մինչ Էսսեան շրջանին մէջ Զատիկը Ապրիլ 13-ին կը տօնուէր, Իրանեան անկէ կը չեղէր և Ապրիլ 6-ին կը տօնէր զայն: Առաջին Մազահիկը 570 թուականին պատահեցաւ և այսպէս շարունակուեցաւ մինչև 1824 և հայոց համաձայնութեամբ վերջ գտաւ: Մեր պատմիչներէն ոմանք, Մատթէոս Ուռհայեցի, կիրակոս Գանձակեցի և ուրիշներ Մազահիկի հարջին շուրջ ինչ ինչ կցկտուր ակնարկութիւններ ունին և այդ մասին կը գրեն: Իսկ ըլլալ Աստուածատուր եպիսկոպոսի, ըլլալ Սուլայանի պատմութեանց մէջ, ընդարձակօրէն գրուած է Մազահիկի մասին, որ ի մասնաւորի երուսաղէմի մէջ արիւնալի գէպքերու, խռովութեանց և մոլեռանդութեանց պատճառ զարձած էր, մօտը յարուցեալ ֓րկչին տիեզերալոյս Ս. Գերեզմանին:

Մազահիկի մասին Մատթէոս Ուռհայեցին այսպէս կը գրէ իր պատմութեան մէջ, ՎՃԱՆՂԻ Ի Ս. Զատիկէ եղնի մոլորեալք տասն աղգ հաւատացելոց և հայք և ասորիք միայն մնացին հաստատեալք. իսկ հոռմք և Փրանկք եղնի հետեողք չար սերմանեացն զոր սերմանեաց պիղծ Հերտակոսն Իսիոն(*) որ արկանէր զՏոմարն

(զԶատիկ) ի յԱպրիլի հինգ, և զլրումն լուսնին հանդիպեցուցանէր ի տօնն Ղազարու և յաւուր Շաբաթու, զոր հայք և ասորիք և երբայեցիք արկանէին ի յԱպրիլի վեց, հանդիպեցուցանէին տօնի Մազկազարդին: Արդ զայս սոմար պատճենիս կարգալ խափանեալ էր փլիխոփան Իսիոն, որ էր այր հոռմմայեցի. վասնզի յորժամ շարադրեցին զսոմար պատճենիցն ինն և տասնեկի բոլորին, զնա ի մօտ ոչ կ'ընեցին այլ զաքս իմաստասիրացն. և յազգս այսորիկ մախացեալ նորա յոյժ ընդ նոսա, և եկեալ զաղտ առեալ զգրեանքն՝ և զվեցն հինգ արար, և զվերջինսն առաջինս, որ հանապաղ ածէ ի մոլորութիւն զատկաց յամենայն իննսուն և հինգ տմ: Զայս այսպէս կարգադրեաց Իսիոն ի յազգն հոռմէացւոց. վասն այսր պատճառի մեծ մաքառումն եղև ընդ յոյնք և ընդ հայք. սակայն աղգն Ֆրանկաց ոչինչ ունէին հոգս շփոթանալ ընդ հայք. բայց միայն յոյնք ունէին մեծ վէճ և մաքառումն ընդ հայք վասն Սուրբ Զատիկին» (ՃՀԵ): Նոյնպէս կիրակոս պատմիչ իր պատմութեան մէջ կը գրէ թէ՛ 1191-ին Մազահիկի պատահեցաւ և Իրիոնի մասին տեղեկութիւններ կուտայ թէ՛ ինչ պատճառներով այդ փոփոխութիւնները ներմուծուեցան:

7.— Մազահիկը, ինչպէս բնիք, Էսսեան հինգարիւրեակը որ մեր Տօնացոյցին մէջ Մեցնեմաւուր մեծ շրջան անուանով կը տրուի, 532 տարուան մէջ չորս անգամ կը պատահի, իրարմէ 95 տարի հեռաւորութիւն ունեցող շրջաններուն մէջ և 247 տարիներու միջոց մը առանց Մազահիկի կ'անցնի: Մազահիկ կը պատահի այն տարիներուն, որոնց վերագիրն է Թ. Սօթնեցեակը Գ և Տարեգիրը Ե: Երբ Տարեգիրը Ե ըլլայ, այդ տարուան Զատիկան լուսնին ծնունդը Մարտ 24-ին, իսկ լուսնին աւագ լրումը Ապրիլ 6-ին կը պատահի: Եւ որովհետեւ, ըստ Նիկիոյ Ա. Սուրբ Ժողովին օրհմանադրութեան, Զատիկը պէտք

զանական կեանք զոյութիւն չունի հոն: Նախնական շրջաններուն, լուսնից կը վերադրուէր ինչ ինչ ազգեցութիւններ. բուսականութեան վրայ, առաջնութեան վրայ, ժամանակի վրայ՝ մշակի մէջ ևս լուսնոյ մասին կան իր ժամանակներ մշակման համար ինչ ինչ տեղեկութիւններ: (*) Իրիոն (կամ Իրան) Յուստինիանոս կայսեր ժամանակ (527-565) զբռն երէց էր արքուն

նիքին մէջ, օրուն նախադառնութեամբ Բիւզանդիոնի մէջ Էսսեան հինգարիւրեակի տոմարական դրութեան քննութիւնը տեղի ունեցաւ և որուն մէջ ներմուծուեցաւ այդ մեծ շրջանին մէջի լուսնին աւագ լրումներու տարբերութեաները, որ 532 տարուան մէջ չորս անգամ կը պատահէր և որ Մազահիկի պատճառ կը զանաւար:

է տօնել լուսնին առաջ լրման յաջորդող
Կիրակիին, հայերը՝ Ապրիլ 13-ի Կիրակիին
կը տօնեն զայն: Մինչդեռ յոյները մեղմէ
կը շեղին: Վասնզի՝ յունաց Վերադիրը 10
ըլլաով, զատկական լուսնին ծնունդը Ապ-
րիլ 23-ին կը պատահի, իսկ լուսնին առաջ
լրումը Ապրիլ 5 Շաբաթ օրը պատահելով,
յոյները 6-ին կը տօնեն Զատիկը: Մուսու-
տիկին պատճառաւ, հայ և յոյն եկեղեցի-
ներու միջև ոչ-քրիստոնէական զէպքեր,
խռովութիւններ, երբեմն իսկ մոլեռանդա-
թիւններ առաջ կուգային: Ինչպէս ըսուե-
ցաւ վերև, հայերը 1824-ին, որ նոյնպէս
Մուսուտիկի տարի մըն էր, համաձայնու-
թեան գալով Շ Տարեգրին տեղ չ Տարե-
գիրը գործածեցին, այս կերպով առաջքը
առնուած եղաւ ինչ ինչ տգեղ տեսարան-
ներու և մոլեռանդ մրցակցութեան:

Ուրեմն, Հինգհարիւրամեակի մեծ օր-
ջանին մէջ, 2071, 2166, 2261 և 2356
տարիներուն Տարեգիրներ փոխանակ Շ Տա-
րեգրի, չ Տարեգիրով փոխանակուած են,
որպէսզի Մուսուտիկ չի պատահի: Երջան-
կայիշատակ Օրմանեան Ս. Իրաւամբ կ'ըսէ
«Թէպէտ եղելութիւնը կարեւոր և հետե-
ւանքը ընդհանուր, սակայն կատարեալ յի-
շատակներ կը պահսին թէ ո՞վ եղաւ առա-
ջին միտքը արթնցնողը, ինչպէ՞ս կազմուե-
ցաւ ազգային համամատնութիւնը, ինչ կեր-
պով համաձայնեցան բոլոր աթոռները»
(Ազգապատում Դ. Հատոր, էջ՝ 3568-3569):
Թիրաւի մեղի կը պահսին պատմական և
համաձայնական պէտք եղած յիշատակու-
թիւնները թէ՛ ո՞վ և կամ որո՞նք նախա-
ձեռնարկ եղան տոմարական այս կարգա-
գրութեան, որով իսպառ և միանգամ ընդ
միշտ Մուսուտիկին պատճառաւ հայ և յոյն
եկեղեցիներու միջև վէճերը, խռովութիւն-
ները և մոլեռանդութիւնները վերջ գտան:

Մեր այս յօդուածով փափաքեցանք
ամփոփ զազափար մը ևս տալ Սիոնի պատ-
ընթերցողներուն Մուսուտիկի մասին, որ
այսևս պատմութեան անցած է և սակայն
իր տօնակցութեան պատճառով, ի մասնա-
ւորի Ս. Քաղաքի մէջ տեղի ունեցած յա-
ճախ արհեստի տեսարաններով, խոցած է
երուսաղէմի Առաքելական Ս. Աթոռի Մի-
աբանութիւնը, ինչպէս նաև հայ ժողո-
վուրդը ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի:
ՊԱՐԳԵՒՆՎՐԴ. ՎՐԹԱՆՆՍՆԱՆ

ԼԵԶՈՒՍԳՐԻՏԱԿԱՆ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԱՁԴԵՑՈՒԹԻՒՆԸ
ՀԱՅԵՐԷՆԻ ՎՐԱՅ ԵՒ ԼԱՏԻՆԱԲԱՆ
ՀԱՅԵՐԷՆ(¹)

Այս ժամանակ հայերը Իտալիայում
կազմում էին մի ուժեղ գաղութ. Նրանք
ուժեղ էին ո՛չ այնքան թուով, որչափ ի-
րենց առևտրական գործունէութեամբ. այս
պատճառով էլ տեղական իշխանութիւնները
քաջայայտում էին Նրանց ամէն կերպ և տա-
լիս էին այնպիսի արտօնութիւններ՝ որ
նոյնիսկ իտալացոյ չէին տալիս: Այսպէս
1579 թուին Վենետիկի հայ գաղութը կազ-
մում է ինքնավար ազգային սահմանա-
գրութիւն: Նոյնը տեղի է ունենում աւելի
յետոյ Լիվոռնոյում ևայլն:

Այս հայերը ընականաբար պատկանում
էին իրենց ազգային եկեղեցուն. պապը
ուզենալով որսալ նրանց, 1584 թուին հիմ-
նեց Հռոմում Հաւատոյ տարածման միա-
բանութիւնը, որին իսկոյն յաջորդեց ա-
ռանձին հայ տպարան: Այս տպարանը ե-
ղաւ պրոպագանդայի գործիքներից մէկը և
նպատակ ունէր իր տպած կաթողիկոսի
գիրքերի միջոցով կաթողիկոսութիւնը տա-
րածել հայոց մէջ: Այս տպարանը՝ մինչև
1728 թիւը բաւական ընդարձակ գործու-
նէութիւն ցոյց տուեց և տպեց շատ հայե-
րէն գրքեր, ինչպէս Տոմար Գրիգորեան,
Կոնդակ պապի, Այբբենարան, Քերական-
նութիւն, Կղեմէս Գալստիսի Միաբանու-
թիւն Ս, եկեղեցւոյն Հայոց ընդ Ս. Եկե-
ղեցւոյն Հռոմայ, Բառգիրք Հայ-Լատին
ևայլն: Ահա այստեղ, պրոպագանդայի այս
չըջանում, կազմում է լատինարան հայե-
րէնը, որ պէտք է կոչել ո՛չ թէ Ունիթո-
ական, այլ կոչելիան հայերէն և որի հե-
ղինակներն են Հռոմի դպրոցում սնուած
հայ կաթողիկ վարդապետներ: Այսպիսինե-
րից Նշանաւոր են Յովհաննէս Հովով և
Բարսեղ Հովով, երկուսն էլ Կոստանդնու-

(¹) Շարահակութիւն՝ մեծագույն հեղինակի «Պատ-
մութիւն Հայ Լեզուի» գործէ (ԻԳ. Գրախ):